**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**«---» ---------- 2025թ.** **N ----Ն**

**ՈՐՈՇՈՒՄ**

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՐՇԱՎԻՐ ՇԱՎԱՐՇՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշենի 6-րդ փողոցը (սկսվում է Դավթաշենի 1-ին փողոցից, 5-րդ փողոցին զուգահեռ հասնում Դավթաշենի կամրջի տարածք) անվանակոչել հայ մանկավարժ, պրոֆեսոր ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Արշավիր Շավարշյանի անվամբ՝ «Արշավիր Շավարշյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՐՇԱՎԻՐ ՇԱՎԱՐՇՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արշավիր Շավարշյանը ծնվել է 1884թ. մայիսի 14-ին, Իգդիրում (Սուրմալուի գավառ):

Նախնական կրթությունն ստացել է տեղի ծխական դպրոցում, ապա սովորել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում (1896-1998 թվականներ), որտեղ աշակերտել է Աղայանին և Պռոշյանին, և Էջմիածնի Գևորգյան ճեմարանում (1898-1906 թվականներ):

1906-1910թթ. ավարտել է Ճեմարանը՝ որպես մանկավարժ և աշխատել Եկատերինոդարի (Կրասնոդար) հայկական ծխական դպրոցում:

1910-1914թթ. սովորել է Ենայի, ապա՝ Լայպցիգի համալսարաններում: Արշավիր Շավարշյանն ավարտել է փիլիսոփայության ֆակուլտետի մանկավարժություն-հոգեբանություն բաժինը:

1914-1918 թթ. դասավանդել է մանկավարժություն և հոգեբանություն՝ Գևորգյան ճեմարանում: 1918թ.փոխադրվել է Երևան՝ տարրական դպրոցների տեսուչի պաշտոնով: Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո աշխատել է լուսժողկոմատում՝ որպես դպրոցական կենտրոնական հրահանգիչ (1921 թվական): 1921-1922 թթ. նշանակվել է սոցդասվար՝ Երևանի լուսբաժնում:

1921թ. Երևանում եղել է Ն.Կրուպսկայայի անվան դպրոցի հիմնադիրը և առաջին տնօրենը:

1921-1927թթ. լուսժողկոմատում վարել է ուսուցիչների վերապատրաստման, ապա դպրոցական բաժինները: Երևանի պետական համալսարանի մանկավարժության ֆակուլտետի բազայի վրա, ելնելով ուսուցչական կադրերի մեծ պահանջարկից, հիմնվել է Մանկավարժական ինստիտուտը և առաջին տնօրեն է նշանակվել Արշավիր Շավարշյանը: Աշխատել է Երևանի պետական համալսարանում (1921-1935 թվականներ)՝ դասավանդելով մանկավարժական դիսցիպլինա, մանկավարժություն, հոգեբանություն, մանկավարժության պատմություն, հայ մանկավարժության պատմություն, թվաբանության մեթոդիկա: Աշխատել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում՝ որպես դասախոս (1935-1940 թվականներ), մանկավարժության ամբիոնի վարիչ (1940-1960 թվականներ), միաժամանակ տնօրենի տեղակալ (1943-1948 թվականներ):

1936թ. Հայկական ԽՍՀ Լուսժողկոմատի բարձրագույն ատեստացիոն հանձնաժողովի որոշմամբ ստացել է պրոֆեսորի կոչում: 1954թ. ՀՍՍՌ Գերագույն Սովետի նախագահությունը նրան շնորհել է «Գիտության վաստակավոր գործչի» պատվավոր կոչում: Չորս անգամ ընտրվել է Հայկական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների Երևանի քաղաքային սովետի դեպուտատ:

Արշավիր Շավարշյանը մահացել է 1960թ. սեպտեմբերի 11-ին, Երևանում:

Հայ մանկավարժ, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Արշավիր Շավարշյանի անվամբ Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշենի 6-րդ փողոցն անվանակոչելու միջնորդությունը ներկայացվել է քաղաքացի Կարեն Շավարշյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**